



### Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության  
թեկնածու

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ կառավարում մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է փոստ-դոկտորանտի աստիճան: 2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է, 2019 թ.-ից՝ կառավարման ամբիոնի ասիստենտ: 100-ից ավելի գիտական հրատարակումների, այդ թվում՝ երկու մենագրության հեղինակ է և երեք ուսումնական ձեռնարկի համահեղինակ:

 ORCID - <https://orcid.org/0000-0002-4131-6322>

## ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

**Հիմնաբառեր.** *Իսրայելի պետություն, ռազմարդյունաբերություն, պատերազմ, ռազմական արտադրանք, զին-տեխնիկա, տեղեկատվական տեխնոլոգիաներ, իսրայելական հրաշք*

Պատերազմող երկրի համար գերակա խնդիր է ունենալ զարգացած ռազմական արդյունաբերություն: Այս տեսանկյունից, հետաքրքրական է Իսրայելի ռազմարդյունաբերական փորձի վերլուծությունը:

Իսրայելի տարածքն իր մակերեսով մոտ է Հայաստանին, երկիրն ունի թշնամի հարևան պետություններ, ինչպես Հայաստանը, և, չնայած դրան, կարողացել է ստեղծել ու աշխարհին ներկայանալ իր կայացած ռազմական արդյունաբերությամբ:

Այժմ առաջ ունենալով «իսրայելական հրաշքի» փորձը՝ «հայկական հրաշքի» իրագործման, հզոր ու անառիկ պետություն ունենալու համար պետք է աշխատենք բոլորս՝ որպես գերակա նպատակ հայտարարելով մարդկային կապիտալի, տեղեկատվական տեխնոլոգիաների, ռազմարդյունաբերության զարգացումը:

Պատերազմող երկրի համար չափազանց անհրաժեշտ է ունենալ զարգացած ռազմական արդյունաբերություն: 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության վրա լայնածավալ հարձակումը վառ ապացույցն է նրա, որ Հայաստանի գերակա խնդիրներից պետք է լինի ռազմարդյունաբերության հզորացումը: Ինչպես գիտենք, Ադրբեջանը զինվում է նաև իսրայելական արտադրության զենքով: Գաղտնիք չէ նաև, որ Իսրայելն ունի կայացած ռազմարդյունաբերություն: Ուստի այս հոդվածում փորձել ենք վերլուծել Իսրայելի ռազմական արդյունաբերության զարգացման փորձը:

Նախ՝ ներկայացնենք որոշ տվյալներ Իսրայելի մասին: Պետությունը գտնվում է Միջին Արևելքում՝ Միջերկ-

րական ծովի հարավարևելյան և Կարմիր ծովի հյուսիսային ափին, սահմանակից է Լիբանանին, Սիրիային, Հորդանանին, Եգիպտոսին: Տարածքը 22072 քառ. կմ է<sup>1</sup>, բնակչության թիվը 2019 թ. վերջին՝ 9,054 հազար մարդ, որից 6,718 հազարը՝ հրեաներ, 1,898 հազարը՝ արաբներ<sup>2</sup>: Ըստ Իսրայելի վիճակագրության կենտրոնական բյուրոյի տվյալների՝ 2020 թ. օգոստոսին բնակչության թիվն արդեն 9,2 միլիոն է, որից զբաղված մարդկանց թիվը՝ 3,89 միլիոն, գործազրկության մակարդակը՝ 4.7 տոկոս<sup>3</sup>:

2019 թ. Իսրայելի ՀՆԱ-ն ընթացիկ գներով կազմել է 1,406,749 միլիոն իսրայելական շեկել, ինչը համարժեք է 412,9 միլիարդ ԱՄՆ դոլարին, իսկ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ 155,437 իսրայելական շեկել՝ համարժեք 45628 ԱՄՆ դոլարին<sup>4</sup>:

Ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ Իսրայելի ռազմական ծախսերը 2019 թ. կազմել են 20,4 միլիարդ ԱՄՆ դոլար, ինչը ՀՆԱ-ի մոտ 5.3, իսկ պետության ընդհանուր ծախսերի՝ 13.2 տոկոսն է<sup>5</sup>:

Իսրայելը, որպես պետություն, ձևավորվել է 1948 թ. մայիսի 15-ին: Անկախության հռչակումից մի քանի ժամ անց Եգիպտոսը, Սիրիան, Հորդանանը, Սաուդյան Արաբիան, Լիբանանը, Իրաքը և Եմենը պատերազմ հայտարարեցին երիտասարդ պետությանը՝ այդպիսով ազդարարելով արաբա-իսրայելական բախման սկիզբը: Իր գոյության ընթացքում Իսրայելը մասնակցել է 6 լայնածավալ պատերազմների և 5 խոշոր ռազմական գործողությունների արաբական պետությունների ու զինված արմատական խմբավորումների դեմ: Միաժամանակ, իր ձևավորումից անմիջապես հետո Իսրայելը սկսել է հարաբերություններ հաստատել ԱՄՆ-ի, հատկապես՝ տեղի հրեական լոբբիստական կառույցների հետ: Մինչդեռ զենքի մատակարար-

ման ուղղությամբ հարաբերությունները երկու երկրների միջև ամրապնդվել են 1967 թ. արաբա-իսրայելական վեցօրյա պատերազմից հետո, երբ Իսրայելը վճռական կերպով որոշեց կատարելագործել իր ռազմարդյունաբերական բազան՝ նպատակադրվելով ինքնուրույնաբար արտադրել տարբեր ռազմական ապրանքներ՝ հարվածային զինատեսակներից մինչև ռեակտիվ ինքնաթիռներ: Այսպիսով՝ Իսրայելի ռազմարդյունաբերության զարգացման գործում բազմակողմանի աջակցություն է ցուցաբերել ԱՄՆ-ը, որը ոչ միայն տարբեր զինատեսակներ է մատակարարել, այլև մասնակցել է առաջատար զինատեսակների մշակման և ստեղծման համատեղ նախագծերի իրականացմանը<sup>6</sup>:

1967-1973 թթ. ընթացքում Իսրայելի ռազմարդյունաբերական բազան ընդլայնվեց 5, 1974-1984 թթ. ընթացքում՝ ևս 4 անգամ: Այս ժամանակահատվածում ոլորտում զբաղվածների թիվը 14000-ից հասավ 80000 մարդու: Ընդ որում, արտադրվում էր պարզից մինչև ամենաբարդ տեսակի զինամթերք, որի որակը փորձարկվեց 1982 թ. Լիբանան ներխուժելու ժամանակ, երբ իսրայելական արտադրության տանկերն ապահովեցին Իսրայելի գերազանցությունը արաբական զինված ուժերի նկատմամբ:

Ներկայում ռազմական արդյունաբերությունը Իսրայելի ազգային տնտեսության կարևոր բաղադրիչն է, որը ներառում է ներքին օգտագործման և արտահանման համար ավելի քան 600 տեսակի զինտեխնիկա արտադրող պետական և մասնավոր կազմակերպություններ: Երկիրն ունի ժամանակակից ձեռնարկություններ, որոնք թողարկում են հրթիռային-տիեզերական, զենիթային, հակահրթիռային, ավիացիոն, հրետանային, հարվածային, նավաշինարարական, ռադիոէլեկտրոնային և ռազ-

<sup>1</sup> Central Bureau of Statistics, AREA OF DISTRICTS, SUB-DISTRICTS, NATURAL REGIONS AND LAKES, 2019, [https://www.cbs.gov.il/he/publications/doclib/2020/1.shnatongeography/st01\\_01.pdf](https://www.cbs.gov.il/he/publications/doclib/2020/1.shnatongeography/st01_01.pdf)

<sup>2</sup> Central Bureau of Statistics, POPULATION, BY POPULATION GROUP, [https://www.cbs.gov.il/he/publications/doclib/2020/2.shnatonpopulation/st02\\_01.pdf](https://www.cbs.gov.il/he/publications/doclib/2020/2.shnatonpopulation/st02_01.pdf)

<sup>3</sup> Central Bureau of Statistics, <https://www.cbs.gov.il/EN/pages/default.aspx>

<sup>4</sup> Central Bureau of Statistics, GROSS DOMESTIC PRODUCT (GDP) AND USES OF RESOURCES, IN THE YEARS 1995-2019(1), [https://www.cbs.gov.il/he/publications/doclib/2020/11.shnatonnationalaccounts/st11\\_02x.pdf](https://www.cbs.gov.il/he/publications/doclib/2020/11.shnatonnationalaccounts/st11_02x.pdf)

<sup>5</sup> Military expenditure (% of GDP) - Israel, <https://data.worldbank.org/indicator/MS.MIL.XPND.GD.ZS?locations=IL>

<sup>6</sup> Шуминов Н.З., Влияние США на формирование и развитие ВПК государства Израиля, <http://vestnik-brgu.ru/wp-content/numbers/2018-01/v2018-01-22.pdf>

մական նշանակության այլ արտադրանք: Ընդ որում, վերջինիս 70-75 տոկոսն արտահանվում է: 2017 թ. Իսրայելը 5-րդն էր աշխարհում զենքի արտահանման գծով, որին գերազանցել են միայն ԱՄՆ-ը, ՌԴ-ն, Ֆրանսիան և Գերմանիան: Իսրայելական ռազմական արտադրանքն արտահանվում է մոտ 50 երկիր՝ կազմելով ողջ արտահանման 40 և ՀՆԱ՝ ավելի քան 11 տոկոսը:

Ըստ Իսրայելի պաշտպանության նախարարության տվյալների՝ 2017 թ. պետական պաշտպանական ընկերությունները, ընդհանուր առմամբ, ստորագրել են 9,2 միլիարդ ԱՄՆ դոլարի արտահանման պայմանագրեր, որոնց մեծ մասը բաժին է ընկել հակաօդային համակարգերին, ռադիոլոկացիոն և ռադիոէլեկտրոնային պայքարի համակարգերին և ավիացիոն տեխնիկայի համար ավիոնիկայի արդիականացմանն ու մատակարարմանը: Հնդկաստանը, Վիետնամն ու Ադրբեյջանը իսրայելական զենքի երեք առաջատար գնորդներն են<sup>7</sup>:

Այսօր Իսրայելի ռազմական արդյունաբերությունն ունի ժամանակակից գիտահետազոտական և բարձր տեխնոլոգիական արտադրական բազա: Ոլորտի զարգացումն իրականացվում է պետական կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի հիման վրա՝ բյուջեի միջոցների, թողարկվող արտադրանքի արտահանման արդյունքում ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական ռազմավարական դաշնակից ԱՄՆ-ի ֆինանսական օգնության հաշվին:

Երկրի ռազմական արդյունաբերության կառավարման համակարգի առանձնահատկություններից մեկը պաշտպանության նախարարության անմիջական մասնակցությունն է զենքի և ռազմական տեխնիկայի արտադրության կենսապարբերաշրջանի բոլոր փուլերին՝ տեխնիկական բնութագրերի մշակումից մինչև շահագործումից հանելը: Բացի այդ, Իսրայելի ՊՆ-ին

է վերապահված արտահանվող արտադրանքի որակի վերահսկման, օտարերկրյա հաճախորդների հետ բանակցելու իրավունքի և արտահանման արտոնագրերի տրամադրման գործառույթները: Ռազմարդյունաբերական համալիրի կազմակերպությունների գործունեության համակարգումն իրականացնում է SIBAT-ը՝ Իսրայելի ՊՆ պաշտպանության միջազգային համագործակցության գործակալությունը<sup>8</sup>: Արտահանման վերահսկման գործակալությունը լայնածավալ ծառայություններ է մատուցում արտահանողներին՝ արտահանման վերահսկողության տարբեր բնագավառներում<sup>9</sup>: Ռազմական արտադրանքի գնումների կազմակերպմամբ զբաղվում է ՊՆ արտադրության և գնումների վարչությունը<sup>10</sup>, որը պատվերներ է տալիս ռազմարդյունաբերական համալիրի ձեռնարկություններին՝ մրցույթների արդյունքների հիման վրա: Օրինակ՝ 2018 թ.-ին անցկացվել է ավելի քան 7.6 հազար մրցույթ, որի արդյունքում ռազմարդյունաբերական ձեռնարկությունները ստացել են մինչև 12 միլիարդ ԱՄՆ դոլար արժողությամբ շուրջ 30 հազար պատվեր:

Ընդհանուր առմամբ, ռազմական նշանակության արտադրանքի արտադրությամբ զբաղվում է ավելի քան 500 ընկերություն (աշխատողների ընդհանուր թիվը՝ մոտ 150 հազար): 130 ընկերություն զենքի և ռազմական տեխնիկայի ուղղակի մատակարար է երկրի զինված ուժերին և օտարերկրյա պատվիրատուներին: Դրանց մեծ մասը փոքր և միջին (մինչև 100 մարդ) ձեռնարկություններ են՝ պետության մասնակցության տարբեր մասնաբաժիններով: Սեփականության տեսանկյունից, դրանք ներկայացնում են պետական և մասնավոր ձեռնարկություններ, ներառյալ՝ օտարերկրյա և, առաջին հերթին, ամերիկյան կապիտալի ներգրավմամբ ընկերությունները:

Երկրի ռազմական արդյունաբերության կարողությունների հիմնական մասը պատ-

<sup>7</sup> Иванов С., Тенденции развития военной промышленности ряда ближневосточных стран, Зарубежное военное обозрение, 6/2019, 30-34, <https://www.imemo.ru/files/File/ru/articles/2019/zvo-2019-06-ivanov.pdf>

<sup>8</sup> SIBAT- International Defense Cooperation, <https://english.mod.gov.il/Departments/Pages/InternationalDefenseCooperation.aspx>

<sup>9</sup> Defense Exports Control Agency (DECA), <https://english.mod.gov.il/Departments/Pages/DefenseExportsControlAgency.aspx>

<sup>10</sup> Department of Production and Procurement (DOPP), <https://english.mod.gov.il/Departments/Pages/DepartmentofProductionandProcurement.aspx>

կանում է երկու պետական և մեկ մասնավոր կորպորացիաների:

«Israel Aerospace Industries» պետական կորպորացիան կազմված է կազմակերպություններից, որոնք զբաղվում են հրթիռային և տիեզերական համակարգերի, հակահրթիռային պաշտպանության համակարգերի, հակատանկային և հականավային համալիրների, անօդաչու թռչող սարքերի և այլ ավիացիոն տեխնիկայի, ինչպես նաև ռադիոէլեկտրոնային սարքավորումների մշակմամբ, արտադրությամբ, նորոգմամբ և արդիականացմամբ:

«Rafael Advanced Defense Systems» ՍՊԸ-ն պետական ընկերություն է, որի կազմի մեջ մտնող ձեռնարկությունները մշակում և արտադրում են զենքի լայն տեսականի, այդ թվում՝ ժամանակակից ռադիոէլեկտրոնային պայքարի, ցամաքային և ծովային հակահրթիռային պաշտպանության և հակաօդային պաշտպանության համակարգեր, ավիացիոն և հակատանկային հրթիռային զենքեր, օդային ռադիոէլեկտրոնային սարքավորումներ (ավիոնիկա):

«Elbit Systems» մասնավոր կորպորացիան զբաղվում է հրթիռային զենքի, զինամթերքի լայն տեսականու, ավիացիայի և նավերի սիմուլյատորների, նավիգացիոն սարքավորումների, քաղաքացիական և ռազմական ավիացիայի էլեկտրա-օպտիկական համակարգերի, ինչպես նաև կապի միջոցների արտադրությամբ<sup>11</sup>:

Իսրայելում արտադրվող զինտեխնիկայի ցանկից ևս ակնհայտ է, որ երկիրն ունի ռազմամթերքի հարուստ տեսականի<sup>12</sup>:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ Իսրայելը կարողացել է ստեղծել զարգացած ռազմարդյունաբերություն՝ թե՛ իր սեփական կարիքների բավարարման, թե՛ արտահանման նպատակով:

Վերջում ցանկանում ենք մեջբերել մի հատված Իսրայելի 9-րդ նախագահ Շիմոն Պերեսի 2015 թ. Կիևում՝ Յալթայի եվրոպական ռազմավարության համաժողովի ընթացքում հնչեցրած ելույթից. «Մենք երա-

զում էինք մեր հողի մասին, բայց հողը, որ ստացանք, երազային չէր: Դա մի փոքրիկ կտոր էր: Այդ հողը մեր հանդեպ այնքան էլ լավ վերաբերմունք չէր ցուցաբերում, պետք էր ընտրություն կատարել միջատների ու քարերի միջև: Դրա վրա երկու լիճ կար, մեկը՝ մահացած, մյուսը՝ մահացող: Ջուր ընդհանրապես չկար, չկային բնական պաշարներ:

Մենք միայնակ էինք, չունեինք կրոնի եղբայր, լեզվի քույր, պատմության հարևան: Եվ այդ ամենը Հոլոքոստից հետո էր: Մենք գնացինք այնտեղ ու չգիտեինք՝ ինչ անել:

Մարդիկ ինձ հարցնում են՝ ինչպես ակտիվ մնալ: Դա շատ հեշտ է, մտովի հաշվեք ձեր նվաճումներն ու երազանքները: Եթե ձեր երազանքներն ավելի շատ են, քան նվաճումները, ուրեմն՝ դուք երիտասարդ եք:

Եվ մենք մտածեցինք՝ բնության մեծագույն հարստությունը մարդն է, մարդն է հարստացրել հողը, ոչ թե հակառակը:

Մենք բոլորս դարձանք գիտնականներ: Իսրայելի յուրաքանչյուր գյուղացի սկսեց սովորել, թե ինչպես կարելի է գյուղատնտեսություն հիմնել՝ առանց հողի ու ջրի: Մենք հիմնեցինք բարձր տեխնոլոգիաների վրա խարսխված առաջին գյուղատնտեսությունը: Ես ինքս այդ ժամանակ գյուղատնտեսական ինստիտուտի ուսանող էի...

Ապագայի համար կարևոր չէ, թե ինչ եք կարծում, այլ այն, թե ինչ եք արտադրում:

Մենք չունեինք մարդիկ ու զինամթերք, երբեք չէինք կովել, ընդամենը 450 հազար մարդ ունեինք, որոնց մեջ զինվորականներ չկային: Երբ ստեղծվեց Իսրայելի պետությունը, պատերազմ էր: Ինչ կարող էինք անել. միայն երկու բան: Առաջինը՝ մարդիկ պետք է խիզախ դառնային, նրանք պետք է հասկանային, որ այլընտրանք չունեն, միայն պետք է հաղթել, եթե մեկ անգամ պարտվեինք՝ վերջ: Երկրորդը՝ քանի որ չունեինք զենք, սկսեցինք դա արտադրել: Բանակը բարելավելու համար սկսե-

<sup>11</sup> Лисенко Д., Военная промышленность Израиля (2020), Зарубежное военное обозрение. 2020. №2. С. 19-23, [http://factmil.com/publ/strana/izrail/voennaja\\_promyshlennost\\_izrailja\\_2020/36-1-0-1732](http://factmil.com/publ/strana/izrail/voennaja_promyshlennost_izrailja_2020/36-1-0-1732)

<sup>12</sup> Израильская военная техника, [http://cyclowiki.org/wiki/%D0%98%D0%B7%D1%80%D0%B0%D0%B8%D0%BB%D1%8C%D1%81%D0%BA%D0%B0%D1%8F\\_%D0%B2%D0%BE%D0%B5%D0%BD%D0%BD%D0%B0%D1%8F\\_%D1%82%D0%B5%D1%85%D0%BD%D0%B8%D0%BA%D0%B0](http://cyclowiki.org/wiki/%D0%98%D0%B7%D1%80%D0%B0%D0%B8%D0%BB%D1%8C%D1%81%D0%BA%D0%B0%D1%8F_%D0%B2%D0%BE%D0%B5%D0%BD%D0%BD%D0%B0%D1%8F_%D1%82%D0%B5%D1%85%D0%BD%D0%B8%D0%BA%D0%B0)

ցինք զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը՝ ծառայեցնելով դա բանակին, քանի որ մենակ էինք թշնամական միջավայրում:

Ինչո՞ւ եմ սա պատմում: Մինչև հիմա ասում եմ երիտասարդ տղաներին և աղջիկներին՝ ընկերներ, դուք ավելին ունեք, քան մտածում եք: Այլարկոտ մի՛ եղեք: Դուք շատ ավելին ունեք, քան երկիրը կարող է ձեզ առաջարկել: Դուք կարող եք արտադրել այն, ինչ չունեք: Դա դաս է բոլորի համար...

Մարդկանց ներուժը շատ մեծ է: Բայց նրանք այլարկոտ են: Եթե ուզում ես ինչ-որ բանի հասնել, պետք է աշխատես...

Պետք է հետևել գիտությանը: Գիտությունը չունի սահմաններ: Մի՛ փորձեք լուծել անցյալի խնդիրները, անցյալը, սովորաբար, դեր չի խաղում: Վերլուծե՛ք այն միայն նրա համար, որ հին սխալները չկրկնեք: Անցյալում չկա հույս և ապագա:

Ինձ երբեմն հարցնում են. «Որո՞նք են Ձեր ամենամեծ սխալները, երբ հետ եք նայում»: Ես պատասխանում եմ՝ մենք մտածում էինք, թե «հսկա» երազանքներ ունենք: Հետո գիտակցում ենք, որ դրանք այնքան էլ հսկայական չէին: Ավելի շատ բաների մասին երազեք: Որքան շատ են երազանքները, այնքան ավելի շատ բանի կհասնեք»<sup>13</sup>:

Այս ելույթն «Իսրայելական հրաշքի» պարզ ու հասկանալի մեկնաբանում է, թե ինչպես կարճ ժամանակում, գտնվելով պա-

տերազմական իրավիճակում և հարևան երկրների հետ հակամարտության մեջ, կարելի է առաջընթաց ապահովել տնտեսության տարբեր ոլորտներում: Ուստի Հայաստանն այս փորձի ուսումնասիրմամբ ու տեղայնացմամբ լուրջ քայլեր պետք է իրականացնի՝ զարգացնելու համար մարդկային կապիտալը, տեղեկատվական տեխնոլոգիաները, ռազմարդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և այլն: «Հայկական հրաշքի» իրագործման համար պետք է աշխատենք բոլորս, ստեղծենք որակյալ գիտակրթական համակարգ, ներդրումներ կատարենք մարդկային կապիտալում, ՏՏ ոլորտում, որը պետք է ծառայեցնել ռազմարդյունաբերության և մյուս ոլորտների զարգացմանը: Հարևանությանը ունենալով 2 թշնամի պետություն՝ հասկանալի է դառնում, որ տարածքային և այլ բնույթի հակամարտություններ միշտ էլ կարող են լինել ու կրկնվել, հետևաբար՝ այս պարագայում մեզ համար միակ ելքը զարգացած ռազմարդյունաբերություն ունենալն է, որը կարող է և՛ հաղթանակ ապահովել, և՛ կասեցնել թշնամու հարձակման ցանկությունը, և՛, իհարկե, արտահանման պարագայում՝ եկամուտ ապահովել երկրի համար: Հուսանք՝ այս պատերազմից հետո մեր երկրի համար գերակա խնդիր կդառնա ռազմարդյունաբերության զարգացումը:

<sup>13</sup> "DREAM BIG. THE BIGGER YOUR DREAM, THE MORE YOU WILL GET" - INSPIRATIONAL SPEECH BY SHIMON PERES IN KIEV, <http://slavukraine.net/en/news/latest-news/3102-dream-big-the-bigger-your-dream-the-more-you-will-get-inspirational-speech-by-shimon-peres-in-kiev.html>, 92-ամյա նախկին նախագահի խոսքերը ցնցել են որչ աշխարհը, <http://henaran.am/140902.html>

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թովմասյան Ա., Իսրայելի պետության ռազմարդյունաբերական համալիրի ձևավորումն ու կառավարումը, Պատմություն և մշակույթ հանդես, 2017, ԵՊՀ, էջ 334-337, <http://publications.yso.am/wp-content/uploads/2017/09/A.-Tovmasyan.pdf>
2. <http://henaran.am/140902.html>
3. Иванов С., Тенденции развития военной промышленности ряда ближневосточных стран, Зарубежное военное обозрение, 6/2019, 30-34, <https://www.imemo.ru/files/File/ru/articles/2019/zvo-2019-06-Ivanov.pdf>
4. Израильская военная техника, [http://cyclowiki.org/wiki/%D0%98%D0%B7%D1%80%D0%B0%D0%B8%D0%BB%D1%8C%D1%81%D0%BA%D0%B0%D1%8F\\_%D0%B2%D0%BE%D0%B5%D0%BD%D0%BD%D0%B0%D1%8F\\_%D1%82%D0%B5%D1%85%D0%BD%D0%B8%D0%BA%D0%B0](http://cyclowiki.org/wiki/%D0%98%D0%B7%D1%80%D0%B0%D0%B8%D0%BB%D1%8C%D1%81%D0%BA%D0%B0%D1%8F_%D0%B2%D0%BE%D0%B5%D0%BD%D0%BD%D0%B0%D1%8F_%D1%82%D0%B5%D1%85%D0%BD%D0%B8%D0%BA%D0%B0)
5. Лисненко Д., Военная промышленность Израиля (2020), Зарубежное военное обозрение. 2020. №2. С. 19-23, [http://factmil.com/publ/strana/izrail/voennaja\\_promyshlennost\\_izrailja\\_2020/36-1-0-1732](http://factmil.com/publ/strana/izrail/voennaja_promyshlennost_izrailja_2020/36-1-0-1732)
6. Шуминов Н.З., Влияние США на

- формирование и развитие ВПК государства Израиля,  
<http://vestnik-brgu.ru/wp-content/numbers/2018-01/v2018-01-22.pdf>
7. Central Bureau of Statistics, AREA OF DISTRICTS, SUB-DISTRICTS, NATURAL REGIONS AND LAKES, 2019,  
[https://www.cbs.gov.il/he/publications/dolib/2020/1.shnatongeography/st01\\_01.pdf](https://www.cbs.gov.il/he/publications/dolib/2020/1.shnatongeography/st01_01.pdf)
  8. Central Bureau of Statistics, POPULATION, BY POPULATION GROUP,  
[https://www.cbs.gov.il/he/publications/dolib/2020/2.shnatonpopulation/st02\\_01.pdf](https://www.cbs.gov.il/he/publications/dolib/2020/2.shnatonpopulation/st02_01.pdf)
  9. Central Bureau of Statistics,  
<https://www.cbs.gov.il/EN/pages/default.aspx>
  10. Central Bureau of Statistics, GROSS DOMESTIC PRODUCT (GDP) AND USES OF RESOURCES, IN THE YEARS 1995-2019(1),  
[https://www.cbs.gov.il/he/publications/dolib/2020/11.shnatonnationalaccounts/st11\\_02x.pdf](https://www.cbs.gov.il/he/publications/dolib/2020/11.shnatonnationalaccounts/st11_02x.pdf)
  11. Defense Exports Control Agency (DECA),  
<https://english.mod.gov.il/Departments/Pages/DefenseExportsControlAgency.aspx>
  12. Department of Production and Procurement (DOPP),  
<https://english.mod.gov.il/Departments/Pages/DepartmentofProductionandProcurement.aspx>
  13. "DREAM BIG. THE BIGGER YOUR DREAM, THE MORE YOU WILL GET" - INSPIRATIONAL SPEECH BY SHIMON PERES IN KIEV,  
<http://slavaukraine.net/en/news/latest-news/3102-dream-big-the-bigger-your-dream-the-more-you-will-get-inspirational-speech-by-shimon-peres-in-kiev.html>
  14. Military expenditure (% of GDP) - Israel,  
<https://data.worldbank.org/indicator/MS.ML.XPND.GD.ZS?locations=IL>
  15. SIBAT- International Defense Cooperation,  
<https://english.mod.gov.il/Departments/Pages/InternationalDefenseCooperation.aspx>

**Գայե ՏՈՎՄԱՅԱՆ**

*Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ,  
 кандидат экономических наук*

ГЕОЭКОНОМИЧЕСКАЯ ХРОНИКА

### **АНАЛИЗ РАЗВИТИЯ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ ГОСУДАРСТВА ИЗРАИЛЬ**

Наличие развитой военной промышленности - приоритет для воюющей страны. В этом контексте необходимо проанализировать развитие военной промышленности Израиля. Израиль похож на Армению по территориальному расположению, имеет соседние враждебные государства и, несмотря на это, смог создать развитую военную промышленность. Развитие человеческого капитала, информационных технологий и военной промышленности должны стать приоритетом для Армении. Мы все должны работать над осуществлением «армянского чуда», если хотим иметь развитое и сильное государство.

**Ключевые слова:** *государство Израиль, военная промышленность, война, продукция военного назначения, военная техника, информационные технологии, израильское чудо*

**Gayane TOVMASYAN**

*Senior Researcher at «Amberd» Research Center, ASUE,  
 PhD in Economics*

GEOECONOMIC CHRONICLE

### **THE ANALYSIS OF MILITARY INDUSTRY DEVELOPMENT OF THE STATE OF ISRAEL**

Having a developed military industry is a priority for a warring country. In this context, it is necessary to analyze the development of Israel's military industry. Israel is similar to Armenia in terms of territory, has neighboring enemy states, and despite that, has been able to create and establish a developed military industry. The development of human capital, information technologies and military industry should be priority issues for Armenia. We must all work for the realization of the "Armenian miracle" if we want to have a developed and powerful state.

**Keywords:** *the state of Israel, military industry, war, military products, military equipment, information technology, Israeli miracle*